

Ռուբեն Ս. Անգալադյան
(Մասկոթ Պետերբուրգ)

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ – ԱՇԽԱՐՀՆ ԱՍԵՍ ԾՈՎԻՑ ՓՉՈՂ ՔԱՄԻ

Ծննդյան 200-ամյակին*

Բանալի բառեր – Հովհաննես Այվազովսկի, ծովանկարիչ, հայկական համայնք, հայկական թեմաններ, Հայաստանի հոգևոր և հերոսական պատմություն, երևելի հայերի դիմանկարներ, ռուս նավաստիներ, պատմական Հայրենիքի զարկերակ:

Մուտք

Աշխատանքի նպատակն է ցույց տալ, թե որքանով է Հովհաննես Այվազովսկու (1817–1900) արվեստը ներգծված հայկական աշխարհին, և կարելի է արդյոք մեծ ծովանկարչին համարել ինչպես ռուսական, այնպես էլ հայ գեղանկարիչ:

Այսպիսի խնդրի առաջադրումն ու վերլուծությունը շատ կարևոր է ինչպես գեղանկարչի բարդ և շատ առումներով չուսումնասիրված արվեստի օբյեկտիվ գնահատման, այնպես էլ երկու մեծ մշակույթների ընթրման համար, որոնց պատմական ճակատագրերը հաճախ փոխառնչվում, իսկ որոշ ժամանակներում – առավել սերտ մերձեցման ձևեր են ընդունում:

Գեղանկարչի հայրը՝ Գևորգ (Կոնստանդին) Հայվազովսկին (1771–1841), երկարամյա դեզերումներից հետո մոտ 1810 թվականին հաստատվեց Թեոդոսիայում, որտեղ ամուսնացավ տեղացի հայուհի, գեղեցկուհի Հռիփսիմեի հետ: 1817 թվականի հուլիսի 17(29)-ին ծնվեց նրանց որդիներից կրտսերը՝ Հովհաննեսը (Իվանը)՝ ապագա մեծ ծովանկարիչը:

1783 թ. Ղրիմն անցել էր Ռուսաստանի հովանու տակ և աստիճանաբար փոխում էր իր ազգային կազմը: Թուրք-օսմանները և մյուս մահմեդական ժողովուրդները սկսել էին լքել այն: Օսմանյան կայսրությունը, որ տիրում էր Ղրիմին 15-րդ դարից, մոտ 1802 թ. վերջնականապես կորցրեց իրական իշխանությունը թերակղզու վրա: Փոքրիկ քաղաք Թեոդոսիան ավերակների մեջ էր: Ռուսական կառավարությունը թեոդոսիական նավահանգիստը

*Հոդվածն ընդունվել է տպագրության 29.08.2017:

Թ. (ԺԵ) րաբի, թիվ 3 (59), հայխ-սեպտեմբեր, 2017
ՎԿՎ համահայկական հանդես

դարձրեց առանց տուրքի, այդպիսով նա ցանկանում էր վերակենդանացնել քաղաքի տնտեսությունը:

Հայերը թերակղզու տնտեսության մեջ կարևոր տեղ էին զբաղեցնում: Սա նույնիսկ օսմաններն էին հասկանում: Քաղաքը բազմազգ էր, և հայերն այստեղ ապրում էին անհիշելի ժամանակներից: 1267 թվականին կառուցված Սուրբ Սարգիս հայկական եկեղեցին քաղաքի և երկրամասի կարևոր իրադարձությունների վկան է եղել: Եկեղեցին հայկական լավագույն գրատունն էր Դրինում: Հենց այստեղ են մկրտել Հովհաննեսին, այստեղ էլ նա գրագիտություն է սովորել, այստեղ էլ պսակադրվել է, այստեղ նրա հուղարկավորության ծեսն են կատարել, այստեղ իսկ նրան գերեզման են դրել: Հայկական համայնքը դարերի ընթացքում մշակել է իր կյանքի երեք կարևորագույն բաղադրիչ՝ եկեղեցի, գրքերի, թերթերի տպագրություն և դպրոց: Կյանքի հենց այսպիսի կառուցվածքն է ձուլումից փրկել աշխարհով մեկ ցիրուցան եղած հայկական գաղթօջախները:

Ինձ հետաքրքրում է՝ ինչպես է Այվազովսկու մոտ արվեստի ըմբռնման կառույցն ամբողջացել: Բնչն է որոշիչ եղել նրա աշխարհայացքի մեջ: Ամենից առաջ պետք է ասել, որ Այվազովսկիները ավանդական հայկական ընտանիք էին, և այն, պատկերավոր ասած, ներգողված էր հայկական ոչ մեծ գաղութի կացութաձևի մեջ: Կրկնեմ՝ այն ժամանակվա Թեոդոսիան բազմազգ էր: Քաղաքի բնակչությունը շատ լեզուներով էր խոսում՝ հունարեն, իտալերեն, հայերեն, խազարերեն, թուրքերեն, թաթարերեն, իսկ 18-րդ դարի վերջից՝ նաև ռուսերեն: Թեոդոսիայի հայկական գաղութը գոյություն է ունեցել 9-10 դարերում և տիպական էր իր ժամանակի համար (19-րդ դ.): Հայկական գաղութը շատ հարաձկուն էր և առևտրամշակութային լայնարձակ կապեր ուներ ինչպես Արևմուտքում (հատկապես Միսիթարյան միաբանության հետ), այնպես էլ Արևելքում (առաջին հերթին Էջմիածնի հետ):

Թեոդոսիայում Սուրբ Սարգիս եկեղեցուն կից կար ծխական լավ դպրոց, որտեղ էլ փոքրիկ Հովհաննեսը գնաց՝ գիտելիք ստանալու: Այստեղ, ինչպես և տանը, նա լավ դաստիարակություն և կրթություն ստացավ: Սրանով էլ բացատրվում է շարադրանքի նրա սքանչելի ոճն ու ձեռագրի գեղեցկությունը: Ունենալով լավ լսողություն՝ նա հիանալիորեն ջութակ էր նվագում: Այվազովսկին ամբողջ կյանքում զգայուն է եղել ազգային արժանապատվության և մարդկային հպարտության հանդեպ: Առաջինը նա ձայն բարձրացրեց օսմանյան Թուրքիայում հայերի սպանդի դեմ՝ սուլթանից ստացած պարգևները տալով իր շան բերանը: Միևնույն ժամանակ նա Եվրոպայում իր նկարների վաճառքի եկամտից զգալի գումարներ էր ուղարկում կարիքավոր հայերին ու հույներին: Նա բարձր էր գնահատում նրանց, ովքեր ձայն բարձրացրին թուրքական բռնակալության դեմ:

Սկսած Գեղարվեստի կայսերական ակադեմիայում ուսումից՝ նա իր վրա ուշադրություն գրավեց. 1836 թ. արձաթե մեդալ ստացավ, իսկ 1837 թ. Մեծ ոսկե մեդալ ստացավ իր նկարների համար: Նկատի ունենալով ուսման մեջ հատուկ հաջողությունները՝ Ակադեմիան նրան թույլ տվեց ուսումն ավարտել սահմանված ժամկետից երկու տարի շուտ: Կայսր Նի-

կողայ I-ի բարեհաճությունը, հետագայում՝ ծովակալությունում աշխատանքն ու բարձր դիրքը, ինչպես նաև Արքունիքի համակրանքը բացառիկ դրություն ստեղծեցին Այվազովսկու համար՝ որպես ռուսական մշակույթի և հայկական աշխարհընկալման մարդու: Եվ հենց այս դիրքերից է, որ Այվազովսկին ինչպես ռուս, այնպես էլ հայ գեղանկարիչ է: Բայց պետք չէ հաշվից դուրս թողնել նաև եվրոպական մշակույթը, որը նրա կողմից խորապես ըմբռնված էր: Ճանաչումը եկավ արագ և ամենուր՝ ռուսաց կայսրից մինչև պապ, եվրոպական ակադեմիաներից, թուրքական սուլթաններից մինչև ամերիկացի միլիոնատերեր... Այսպես՝ ահա արդեն 170 տարուց ավելի է՝ Այվազովսկին հետաքրքրում է ամբողջ աշխարհի արվեստասերներին և անընդմեջ առաջադրում է նորանոր առեղծվածներ, որոնք նոր սերունդների համար նույնպես մնալու են որպես առեղծվածներ: Իսկ նրա նկարների գինը անփոփոխ կերպով աճում է և շարունակելու է աճել:

1. Այվազովսկու արվեստը

Ծեր նկարիչը խոնջանքով նայում էր ծովին: Ընդամենը ժամ առաջ ավարտել էր իր վերջին կտավը: Հնարավոր է՝ այն ամենացանկալին է: Այնտեղ՝ թիկունքում՝ ընդարձակ արհեստանոցում, ծածանվում էր ծովը՝ նրա երևակայության նորածին զավակը, նրա սրտի մասնիկը... Նա վաղուց էր մտորում՝ ինչպես անվանել այդ կտավը... Որոշեց. հասարակ՝ «Ալիք»:
«Սրտի ուժը, սրտի կամքը, ռիթմը, երևակայության լարվածությունը, ձեռքի դաստակների և մատնահարվածների նրբասահությունն ու զգայունությունը. ամեն ինչ տեղում է», - մտածեց նա: Ծովի տարերքն էլ հենց նրա առեղծվածն է: Նրա երևակայության մեջ ջրի այդ անսանձելի տարերքն է կամ ավելի ճիշտ՝ նա մասն է այդ կենդանի անսանձելի տարերքի... Արդյոք միայն ջրի: Ինչպես ապրեն մարդիկ այդ տարերքով: Իսկ ինչպես վարվել մարդկանց ճակատագրի և իր ժողովրդի ճակատագրի վերաբերյալ իր տագնապի մեջ եղած տարածության հետ: Եվ սա է արդյոք նրա կտավների իմաստը: Արիություն ունի արդյոք մարդը, որ ցանկա հաղթահարել աստվածային գաղափարը: «Ալիքը» («Ռուսական թանգարան», Մանկտ Պետերբուրգ, 1889 թ.) կենդանի, հուժկու և ամենաթափանց նկար է՝ ոչ դյուրահավան, ոչ բարի, բայց նաև ոչ թշնամական, դիտողի հոգու վրա մոգականորեն ներգործող: «Ալիքը» և «Քառսը» (Վենետիկ, Սուրբ Ղազար կղզու Մխիթարյան միաբանություն, 1841 թ.) փիլիսոփայական բովանդակության համամարդկային արժեքներ են կրում՝ բացահայտելով գեղանկարչի մտածողության ընդգրկումը, մարդու կյանքի համար բնության՝ որպես կարևորագույն և միասնական համակարգի, դերի նրա ըմբռնումը: Վարպետը հառնում է ոչ թե որպես ծովը պատկերող գեղանկարիչ, այլ որպես այդ տարերքի որդի և հայր: Նկարիչը ստեղծում է բախման այնպիսի իրադրություն, որ դիտողն իրեն զգում է միաժամանակ և՛ նկարի առաջ, և՛ նրա մեջ: Եվ այդ իրադրություններում (փոթորիկ, անհանգիստ ծով և այլն) գեղանկարչի էներգետիկ ներուժը զորեղագույնն է: Նա կարծես այդ ծովային տարածություն է նետում լինելության հասկաց-

ման մղումը: Այսպիսին է նրա ստեղծագործական և մարդկային եսը: Նա օգնում է ոչ միայն այստեղ՝ ամուր հողի վրա, կարիքավոր մարդկանց, այլ նաև այն նավորդներին, որոնց պատկերում է: Եվ այստեղ Այվազովսկին կյանքի իմաստի ներքին լրիվությամբ, բնության մեջ ներթափանցելու գործությամբ նման է Միքելանջելոյին... Իսկ ահա թե ինչ է գրում Միքելանջելոյի մասին Գյոթեն. «Ես արդեն բնության համը չեմ զգում, քանի որ չեմ կարող նրան նայել այնքան մեծ աչքերով, որքան Միքելանջելոն»¹:

Այժմ տեսնենք, թե ինչպես է փոխվում նկարչի՝ ծովի կոնպոզիցիոն պատկերումը կտավում... Մարդիկ և երկրային ցամաքը Այվազովսկու նկարներում լոկ ճշգրտում են՝ ով է գլխավորը յուրաքանչյուր սյուժեում: Հ. Այվազովսկին իր արվեստում զբաղված չէ իրականության գեղարվեստական ձևի կործանում-կառուցումով, ինչով զբաղված են եղել ինտելեկտուալ խաղերի վարպետները. նա իմաստուն է և ժոմանտիկ: Հենց այդ պատճառով շատերը չեն տեսնում արվեստի պատմության մեջ նրա վաստակը, թեպետև սքանչանում են նրա արվեստի յուրահատկությամբ: Համաշխարհային հեղինակություններից գուցեև առաջինը, որ բարձր գնահատեց Այվազովսկու արվեստը, անգլիացի հանձար Վիլյամ Թերները եղավ: Իսկ ռուս հանձարներից, որ բարձր էր գնահատում Այվազովսկուն, Մ. Վրուբելն էր:

2. Մեկ անգամ ևս Այվազովսկու հայկական նկարների մասին

Որպես մարդ՝ նա չէր կտրվում իր արմատներից, խորապես ապրում էր հայկական կյանքով՝ ընդգծելով այդ հանգամանքը և հպարտանալով իր ստեղծագործ ու հոգևոր ժողովրդով: Նա մեծապես հարգում էր հայկական ավանդույթները, ըստ էության՝ նա դաստիարակված է եղել հայկական ավանդական ընտանիքում: Հենց դա էլ նրա համար առաջնահերթ է եղել: Նա հայկական աշխարհի և հայկական համայնքի մարդ էր: Հայկական թեմայով նա ավելի քան քառասուն կտավ է ստեղծել: Դրանց մի մասը նվիրված է Հայաստանի հոգևոր և հերոսական պատմությանը, մյուս մասը՝ ընտանեկան և մտերիմ մարդկանց դիմանկարներ են, ինչպես նաև երևելի հայերի դիմանկարներ՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի, նախարար Մ. Լոռիս-Մելիքովի, Նոր Նախիջևանի քաղաքագլուխ Հ. Խալիբյանի: Ծայրահեղորեն հետաքրքիր է Այվազովսկու «Բայրոնի այցը Մխիթարյաններին Վենետիկի Սբ. Ղազար կղզում» (1898 թ., Հայաստանի ազգային պատկերասրահ): Այս նկարը պատմամշակութային արժեք ունի, քանի որ պատկերում է անգլիացի մեծն ռոմանտիկ առաջին այցը հայկական եղբայրություն 1816 թվականին՝ հայոց լեզու և գրականություն ուսումնասիրելու համար: Այդ ժամանակահատվածում Բայրոնի կողմից գրված է եղել հայերենի քերականության անգլերեն նախաբանը: Հետաքրքիր է «Այվազովսկին՝ ընկերների հետ» կտավը, ինչպես նաև հայերի համար սուրբ լեռ Արարատի և Արարատյան դաշտի բնապատկերները: Հետաքրքիր են Մխիթարյանների թեմայով նկարները, որոնք ապացուցում են նկարչի խոր կապվածությունը իր եղբայր Գաբրիելի հետ: Սա հայկական

¹ Микеланджело. Москва, 1964, с. 59.

թեմատիկայով կտավների զուտ թուուցիկ ցուցակ է: Հայկական Սուրբ Սարգիս եկեղեցու հրդեհից հետո նա ամբողջությամբ նկարազարդեց այն՝ այդպիսով ցույց տալով իր հարգանքն ու սերը իր եկեղեցու հանդեպ: Նա եկեղեցուն կտակեց 50000 ռուբլի՝ վերականգնման համար, և ցանկություն հայտնեց, որ իրեն այնտեղ հանձնեն հողին:

Ռուսաստանը Հ. Այվազովսկու համար մի երկիր էր, որտեղ նա քաջալերանք, ուշադրություն, բարյացակամություն, իսկ հետո նաև իսկական բարձր ճանաչում գտավ: Նա սիրում էր Ռուսաստանի նվիրվածությունը ծովին, հիանում էր ռուս նավաստիների համարձակությամբ և խիզախությամբ: Բայց նա երբեք իրեն չէր տարանջատում հարազատ հայ ժողովրդից, որտեղ էլ լիներ, նա միշտ զգում էր պատմական Հայրենիքի զարկերակը:

Թարգմանությունը ռուսերենից՝ Սիրանուշ Գ. Հովհաննիսյանի

Ռուբեն Ս. Անգալադյան – գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ Նոր և Նորագույն ժամանակների հայ գեղանկարչությունն ու քանդակագործությունը: Հրապարակել է բազմաթիվ ուսումնասիրություններ ու հոդվածներ Մարտիրոս Սարյանի, Երվանդ Քոչարի և այլ նշանավոր նկարիչների ստեղծագործության վերաբերյալ:

Summary

IVAN AYVAZOVSKY – THE WORLD AS THE WIND FROM THE SEA

On the 200th anniversary of birth

Ruben S. Angaladyan (St. Petersburg)

Key words – Ivan Aivazovsky, Armenian community, Armenian themes, the spiritual and heroic history of Armenia, portraits of outstanding Armenians, Russian sailors, pulse of historical homeland.

The purpose of the work is to show how well the art of Ivan Aivazovsky (1817–1900) fits into the Armenian world and if the great seascapeist can be considered as a Russian as well as Armenian painter.

As a man, he was not alien to his roots, he felt like an Armenian and was proud of his creative and spiritual people. He greatly respected Armenian traditions, in fact, was brought up in a traditional Armenian family, and therefore the Armenian community was always top-priority for the artist. He created more than 40 canvases on Armenian themes. Some of them are dedicated to the spiritual and heroic history of Armenia, others are portraits of his family and friends, as well as portraits of outstanding Armenians – Catholicos of All Armenians Mkrtich Khrimyan, Minister Loris-Melikov, Mayor of Nor Nakhiche-

van Kh. Khalibyan.

He received encouragement, attention, and then – really high recognition in Russia. He loved Russia's devotion to the sea, admiring the courage of Russian sailors. But he never moved away from the native Armenian people and wherever he was, he was always feeling the pulse of his historical homeland.

Резюме

ИВАН АЙВАЗОВСКИЙ – МИР КАК ВЕТЕР С МОРЯ

К 200-летию со дня рождения

Рубен С. Ангаладян (Санкт-Петербург)

Ключевые слова – Ивана Айвазовский, маринист, армянская община, армянская тематика, духовная и героическая история Армении, портреты выдающихся армян, русские моряки, пульс исторической родины.

Цель работы – показать, насколько хорошо искусство Ивана Айвазовского (1817–1900) вписывается в армянский мир и может ли великий маринист считаться как русским, так и армянским художником?

Как человек, он не был чужд своим корням, чувствовал себя армянином, подчеркивал это обстоятельство и гордился своим творческим и духовным народом. Он очень уважал армянские традиции, по сути, воспитывался в традиционной армянской семье, в связи с чем армянская община всегда была первоочередной для художника. Он создал более 40 полотен на армянскую тематику. Некоторые из них посвящены духовной и героической истории Армении, другая часть – портреты семьи и близких людей, а также портреты выдающихся армян – Католикос Всех армян Мкртич Хримян, министр М. Лорис-Меликов, мэр Нор Нахичевана О. Халибян.

А Россия была для него страной, где он получал поощрение, внимание, доброжелательность, а затем – действительно высокое признание. Он любил преданность России к морю, любясь мужеством русских моряков. Но он никогда не отдалялся от армянского народа, где бы он ни был, он всегда ощущал пульс исторической родины.